ՀԱՅՐԵՆԱԽՈՍ ՆՎԱԳԸ

Տասնյակ հազարավոր հայեր պանդխտությունից վերադարձել են մայր Հայրենիք, բայց ես ուզում եմ պատմել դրանցից միայն մեկի՝ քսանմեկ տարեկան դաշնակահար Վաչե Հասրաթյանի մասին։

Նա հայրենադարձի առաջին ծիծեռնակն էր, որ իր տասը ընկերների հետ եկավ ավետելու այն տասնյակ ու հարյուրավոր կարավանների մասին, որ անընդմեջ երթով հայրենիք են վերադառնում աշխարհի բոլոր ծայրերից։

Վաչեն ծնվել ու մեծացել է Թեհրանում։ Նրա հայրը, որ իր շրջապատում հարգված ու քաջահմուտ բժիշկ է, ցանկանում էր իր միակ որդուն պատշաճ կրթություն տալ։ Բայց ի՞նչ լեզվով պիտի սովորեր պատանին, ո՞ր կուլտուրայով պիտի սնվեր նրա երազուն հոգին, երբ այն երկիրը, ուր ծնվել է Վաչեն, չունի ոչ մի հայկական դպրոց։

Երաժշտական հիմնավոր ու լիարժեք կրթություն ստանալը նրա մեջ առնհատ ծարավ էր դարձել ու միաժամանակ անիրականալի բաղձանք, այն պարզ պատճառով, որ Թեհրանում երաժշտական բարձրագույն դպրոց չկար։

Եվ ահա ծարավին հագեցում տալու համար էր, որ պատանի դաշնակահարը երաժշտական զանազան խմբակների հետ շրջում էր Իրանի բոլոր այն քաղաքները, ուր կային հայեր։ Նրանց համար տրված հաճերգներին պատանին անպայման նվագում էր հայ երաժշտագետների գործերը, նվագում էր սիրով ու խանդավառ, հայրենի նվագի սրտահույզ ելևէջները նրա երազուն հոգին խլում, տանում էին դեպի չքնաղ այն աշխարհը, որի մասին նա միայն լսել էր ու երևակայությամբ իր մտքում կերտել նրա պատկերները։ Հայրենիքը նա ճանաչում էր միայն գրքերի միջոցով։ Հայրենիքը նրա համար հոփեպարար երգ էր, կենսահորդ ու թրթռուն նվագ։ Ուշ գիշերներին նրա առաջ ռադիոընդունիչի մոտ նա ամբողջովին լսողություն դարձած կլանում էր հայրենիքից եկող մեղեդին ու մտքով ծափահարում Հայկանուշ Դանիելյանին, Պավել Լիսիցյանին ու ամենից շատ Ալեքսանդր Հարությունյանին՝ այն երջանիկ պատանուն, որ հնարավորություն ուներ այնպես անկաշկանդ կերպով հայրենի կամարների տակ հնչեցնելու իր հոգու նվագները...

Առաջին բանը, որ անչափ զարմանք պատճառեց Վաչեին, դա այն հորդաբուխ հրճվանքն ու ուրախությունն էր, որով դիմավորեցին նրան Երևանի հարյուրավոր երիտասարդները ու պատանիները։

Նրանք խմբերով շրջապատում էին իրենց նորեկ կոլեգային, ժամերով թափառում Երևանի կանաչագեղ փողոցներում, պարծանքով ցույց տալիս հայրենի քաղաքի հոյակապ կառուցումներն ու պատմում իրենց հաջողությունների ու հեռանկարների մասին։

Վաչեն հրճվում էր ու զարմանում. նա դեռևս չգիտեր, որ այդ երիտասարդ մարդիկ ուրախ են իր՝ Վաչե Հասրաթյանի երջանկության համար։ Նրա համար այդ մեկը անծանոթ ու անընդունելի հասկացողություն էր։

Այն երկրում, ուր ծնվել էր նա, մարդը մենակ էր իր հրճվանքի ու տվայտանքի մեջ։ Եվ սովետական մարդը կոնկրետ հասկացողություն դարձավ նրա հոգում շնորհիվ այդ երիտասարդ մարդկանց սրտաբաց վերաբերմունքի։

Սովետական այդ մարդկանց մտահոգում էր մի բան—այնպես անել, որ նորեկ պատանին իրեն մենակ չզգա, ընդհակառակը, զգա, որ հարազատ միջավայրում է, իր տանը, իր մեծ ու հզոր ընտանիքի մեջ— Սովետական Հայրենիքում։

Ու երբ սեպտեմբերի մեկին Վաչեն ոտք դրեց Երևանի երաժշտական ուսումնարանի շեմքը, նա վաղուց արդեն միջավայրին ծանոթ ու ինքն էլ ճանաչված ուսանող էր։

Դպրոցը նրա համար արտակարգ պայմաններ ստեղծեց, նրա երաժշտական կրթությունը նորմալ հունի մեջ դնելու համար։

Երիտասարդ դաշնակահար Գ. Սարոյանը հանձն առավ առանձին դասեր տալ Վաչեին։ Ու պատանին հասկացավ, որ իր կրթության գործը այս երկրում միայն իր մասնավոր գործը չէ։ Ահա թե ինչով են ուժեղ այս մարդիկ, ահա թե որն է Ալեքսանդր Հարությունյանի հաջողության պատճառը։ Ու սովետական կյանքը հորդահոս հեղեղի նման եկավ՝ լցվեց նրա մեջ այնպիսի ուժգնությամբ, որ նա այլևս դժվարանում էր հավատալ, թե ինքը ծնվել ու մեծացել է ուրիշ երկրում, այլ իրավակարգում։ Այդպես էլ նա գրեց դեռևս Թեհրանում գտնվող ծնողներին, շտապեցնելով նրանց հայրենադարձը։ Պատանին ուզում էր օր առաջ իր հրճվանքը կիսել արյունակիցների հետ։

Չէ՞ որ նրանց որդին գտել է իր բաղձանքների հանգրվանը, նա այժմ համարձակ է նայում իր ապագային ու էլ ո՛չ ո՛ք չի կարող խանգարել նրան՝ նվիրվելու հայրենի երաժշտությանը։ Էլ ի՞նչն է պահում նրանց օտար հողում ու օտար երկնի տակ։ Եվ ահա Իրանից եկող առաջին քարավանը բերեց Վաչեի ծնողներին։ Որդին նրանց դիմավորեց իբրև տան տեր, իբրև բուն երևանցի։

Ծնողների գալուն հաջորդեց դարձյալ մի շատ նշանակալից դեպք։ Պետական Կոնսերվատորիայի ԼԿԵՄ կազմակերպությունը Վաչեին ընդունեց կոմերիտմիության շարքերը։

Ահա նա՝ կոմերիտական Վաչե Հասրաթյանը նստած է դաշնամուրի առաջ։ Նրա մատները վարժ ու թեթև սահում են ստեղնաշարի վրայով, սենյակը լցվում է հայրենախոս նվագի սրտահույզ ելևէջներով։ Վաչեն երազուն հայացքով նայում է դուրս, այնտեղ տարածված է հայրենի Երևանը՝ բաբախուն ու մշտահոլով երդի նման։

Լիիրավ քաղաքացու հայացքով է նայում նա. չէ՞ որ նրա ծոցագրպանում վաղուց արդեն տեղավորված է սովետական քաղաքացու անձնագիրը։ Այդ անձնագիրը նրան իրավունք է տալիս մասնակցելու Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի ընտրություններին։ Սովետական Հայաստանի երիտասարդ քաղաքացի Վաչե Հասրաթյանը արտակարգ հուզմունքով է սպասում այդ օրվան։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ